ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քառուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

VI

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-208

Մարիամ Սարիբեկյան
ՀԱԻ/ՀՊԹ

ՀԱՌԻՃԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հառիճի հնագիտական հուշարձանը բազմաշերտ է, այստեղ պեղվել են վաղբրոնզեդարյան բնակատեղի, միջին և ուշ բրոնզ-երկաթի դարերով թվագրվող 120 դամբարաններ, միջնադարյան բնակատեղի և եկեղեցի: Հուշարձանն ունի շուրջ 12 հա մակերես:

Հառիճը միշտ եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում և առանցքային նշանակություն է ունեցել տարածաշրջանի հնագիտության համար: Հուշարձանի բրոնզեդարյան մշակութային շերտերի ուսումնասիրության գործում մեծ ավանդ ունի հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Տելեմակ Խաչատրյանը:

Սույն հաղորդմամբ Շիրակի բրոնզեդարյան մշակութային համատեքստում ներկայացվելու է Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունը, ինչպես նաև դրա տարածաշրջանային կարևորությունն ու հնագիտական նշանակությունը:

Հիմնաբառեր՝ Շիրակ, Հառիճ, բրոնզի դար, միջնադար, ուսումնասիրության պատմություն:

Ներածություն

Հառիճի հնագիտական հուշարձանը գտնվում է Շիրակի մարզում՝ Գյումրուց 22 կմ հվ-արլ.՝ Արագածի արևմտյան լանջերին: Այն ուսումնասիրվել է 20-րդ դ. սկզբից[1]: Հնագետ Տ. Խաչատրյանի կողմից 1966–1972 թթ. բացվել են վաղբրոնզեդարյան բնակատեղին և բրոնզ-երկաթեդարյան դամբանադաշտը, իսկ հետագայում՝ 1980–1990-ական թվականների ընթացքում, Ֆ. Բաբայանն իրականացրել է միջնադարյան բնակավայրի ուսումնասիրություն [նկ.1]: Շարունակելով վերոնշյալ հնագետների գործը, մի շարք մասնագետներ (Կ. Կուշնարյովա, Ս. Դևեջյան, Պ. Ավետիսյան և այլք), իրենց աշխատանքներում անդրադարձել են այս հուշարձանին առնչվող տարբեր խնդիրների:

Քանի որ հուշարձանը բազմաշերտ է, ուսումնասիրության պատմությունը ներկայացնում ենք ըստ ժամանակագրական հերթականության՝ վաղբրոնզեդարյան բնակատեղին, բրոնզ-երկաթեդարյան դամբարանադաշտը և միջնադարյան բնակատեղին ու եկեղեցին:

---

1 Շնորհակալություն ենք հայտնում պ.գ.թ. Ֆ. Բաբայանին՝ Հառիճի հետազոտության մեր նոր նախաձեռնությանը աջակցելու համար: Նմանապես շնորհակալ ենք Հայաստանի պատմության թանգարանի տնօրինությանն ու աշխատակիցներին՝ Հառիճին վերաբերող հնագիտական նյութեր և արխիվային տվյալներ տրամադրելու համար:

Վաղբրոնզեդարյան բնակատեղին

Տելեմակ Խաչատրյանն ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը: 1956 թ. վերադառնալով Երևան՝ նա աշխատանքի է անցել Հայաստանի պատմության պետական թանգարանում և Երևանի պետական համալսարանում: Նա մի շարք կարևոր աշխատությունների հեղինակ է, պեղումներ է կատարել այնպիսի հնագիտական հուշարձաններում, ինչպիսիք են Նոյեմբերյանի, Կիրովականի, Ալավերդու, Ապարանի, Արթիկի շրջանների հուշարձանները[2], 1960 թ. ի վեր ղեկավարել է Արթիկում բացված բրոնզեդարյան դամբարանադաշտի[3], 1966 թ.՝ Հառիճի պեղումները[4]: Տելեմակ Խաչատրյանի անվան հետ է կապվում Հառիճի վաղբրոնզեդարյան բնակատեղիի պեղումների պատմությունը:

1975 թ. լույս է տեսել հնագետի «Շիրակի հնագույն մշակույթը»[5] մենագրությունը, որը հայ հնագիտության ամենակարևոր՝ ընդհանրացնող բնույթի աշխատանքներից է: Այս աշխատանքի հիման վրա Տ. Խաչատրյանը նույն թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Հառիճի վաղբրոնզեդարյան բնակատեղին և դամբարանադաշտը բացվել են Տելեմակ Խաչատրյանի իրականացրած պեղումների ընթացքում՝ 1966–1972 թթ.: Վաղբրոնզեդարյան բնակատեղին գտնվում է գյուղի հարավային սահմանին, բարձր հրվանդանի վրա, որը հյուսիսից, հարավից և արևմուտքից շրջապատված է կիրճերով: Հառիճի վերաբերյալ իր հիմնական աշխատանքում հնագետը նշում է, որ այս բրոնզեդարյան բնակատեղիի հատվածում պեղվել են երեք դարավանդներ (1, 2, 3): Դարավանդներից առաջինում բացվել է բնակատեղիի հիմնական հատվածը (մոտ 42մ^2 մակերեսով), իսկ երկրորդում և երրորդում ձգվում են պատերի շարվածքներ, ամրոցը և միջնաբերդը:

Տ. Խաչատրյանի արշավախմբի ջանքերով հուշարձանի տարածքում բացվել են բնակելի, տնտեսական-արտադրական սենյակներ, պաշտամունքային նշանակության շինություններ, հայտնաբերվել են քարե և կավե կրակարաններ, կավե արձանիկներ, քարե կուռքեր, աշխատանքային գործիքներ, ամբողջական և բեկորային կավանոթներ, մետաղյա առարկաներ և այլն[6]:

Խոսելով հուշարձանի թվագրման և ժամանակագրության խնդիրների շուրջ՝ հարկ է նշել, որ Ռ. Բադալյանն իր մի հոդվածում Հառիճի վաղբրոնզեդարյան բնակատեղին դասակարգում է որպես Կառնուտ-շենգավիթյան խմբին բնորոշ հուշարձան, որը վերաբերում է«Կուր-Արաքս 2» փուլին[7]:

2 Хачатрян 1974, 92–95.

3 Хачатрян 1979, 27.

4 Ավետիսյան և այլք 2018, 15:

5 Хачатрян 1975, 13–18.

6 Хачатрян 1975, 22–28.

7 Badalyan 2014, 82.

2003 թ. Երևանում լույս տեսած Տ.Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուում, «Քարե կոթողներ Հառիճավանքից» հոդվածում, Նունե Խաչատրյանն անդրադարձել է Հառիճում հայտնաբերված նորահայտ կոթողների ուսումնասիրությանը: Հեղինակը նշում է, որ Հառիճի հնագիտական հուշարձանի տարածքում բացվել են շատ ինքնատիպ ուղղանկյուն, երկարաձիգ, ուղղահայաց դիրք ունեցող հրաբխային տուֆից խոշոր կոթողներ, վաղբրոնզեդարյան ամրոցի շինություններից մեկում՝ քարե կուռք և ֆալատիպ արձաններ [նկ. 2]: Հառիճի տարածքում գտնվել է նաև մարդակերպ կոթող, որը կիսանդրու տպավորություն է թողնում[8]:

Բրոնզ-երկաթեդարյան դամբարանադաշտը

Շատ ավելի մանրակրկիտ է ուսումնասիրվել հուշարձանի բրոնզ-երկաթեդարյան դամբարանադաշտը, որը զբաղեցնում է մոտ 3 հա մակերես և վաղբրոնզեդարյան բնակատեղիի շարունակությունն է դեպի արևելք: Դամբարանները մեծ մասամբ քարահողային լիցքով են, մեկ կամ երկու սալով ծածկված. դրանք ուղղանկյունաձև են, երբեմն՝ ձվաձև, անհարթ, շրջանաձև անկյուններով: Թաղումներն անհատական են: Պեղված գույքը հիմնականում բաղկացած է ամբողջական կավանոթներից, մետաղե գործիքներից, նետասլաքներից, կնիքներից:

Վերոնշյալ ժողովածուում Պ. Ավետիսյանը անդրադառնում է Հառիճի ուշ բրոնզեդարյան ժամանակագրությանը և թվագրության խնդիրներին[9]: Հառիճի խեցեղենի կարևորության մասին գրում է Կ. Կուշնարյովան[10], որն, ի դեպ, Տ. Խաչատրյանի «Շիրակի հնագույն մշակույթը» մենագրության գրախոսն է[11]:

Անդրադարձ է կատարվել նաև որոշ կարևոր գտածոների, մասնավորապես Հառիճից հայտնաբերված երկու չհրատարակված կնիքների մասին է Սեդա Դևեջյանի հոդվածը[12]:

Միջնադարյան բնակատեղին և եկեղեցին

Բրոնզեդարյան բնակատեղիից և դամբարանադաշտից բացի, Հառիճը հայտնի է նաև միջնադարյան բնակատեղիով, որի ուսումնասիրությունը 1980–1990 թթ. իրականացրել է Ֆ. Բաբայանը: Շատ կարևոր է նշել, որ մ.թ.ա. 3–1-ին հազ. թվագրվող բազմաշերտ ամրոցի և դամբարանադաշտի օրգանական շարունակությունն են կազմում նույն հրվանդանի տարածքում գտնվող վաղմիջնադարյան ամրոցը, լանջին բացված միջնադարյան շինությունները, գյուղի հարավային հատվածում վեր խոյացող Հառիճավանքը՝ 7–13-րդ դդ. կառույցնե-

8 Խաչատրյան 2003, 118–121:

9 Ավետիսյան 2003, 52:

10 Кушнарева 1993, 126.

11 Кушнарева 1976, 244.

12 Դևեջյան 2003, 68:

րով (կենտրոնագմբեթ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, երկհարկ խորան-մատուռ, արևմտյան պատին կից՝ 19-րդ դ. երկհարկ սրահ-զանգակատուն, 13-րդ դ. Վահրամ իշխանի կառուցած գմբեթավոր դահլիճի ձև ունեցող գավիթ, մատուռ՝ վանքի հարավարևմտյան կողմում՝ ձորակի եզրին)[13]: Համալիրը զարդարում է Իվանե և Ձաքարե իշխանների՝ 1201 թ. կառուցած Ս. Աստվածածին եկեղեցին, որի արևելյան ճակատին նրանց պատկերով բարձրաքանդակը պետք է համարել եղբայրների 25-ամյա ռազմական հաղթանակների խորհրդանիշը[14]:

Ըստ Ֆ. Բաբայանի՝ հուշարձանի միջնադարյան հատվածի պեղավայրում առանձնանում են ժամանակագրական հետևյալ փուլերը՝ 10–13 դդ., 16–18 դդ[15].: Միջնադարյան երկու շերտերից հայտնաբերված խեցեղենի եզակի օրինակները լրացնում են Սպիտակի, Լոռի բերդի, Անիի[16] նմանատիպ հավաքածուն և համադրվում են Վրաստանի, Գանձակի, Ղրիմի նյութերի հետ: Պեղումները ցույց են տալիս, որ հեթանոսական մշակույթի հենքի վրա ստեղծվել է նորը՝ քրիստոնեականը, որը չի ձուլվել նախկինին, այլ վերջինիս շարունակությունն է[17]: Ֆ. Բաբայանը այս համատեքստում անդրադարձել է նաև Հառիճի որոշ գտածոներին[18] և հուշարձանի պատմամշակութային ժառանգության պահպանման խնդիրներին[19]:

Եզրահանգումներ

Նախորդ հետազոտություններն ասերկբայորեն ապացուցում են, որ Հառիճը Շիրակի մարզի կարևորագույն հուշարձաններից է, որն ունի միջտարածաշրջանային նշանակություն: Նրա հետագա ուսումնասիրությունը կարող է նոր լույս սփռել Հայաստանի և հարակից երկրների հնագույն մշակույթի պատմության տարբեր խնդիրների վրա: Հառիճի հնագիտական գտածոների զգալի մասը դեռևս հրատարակված չէ: Հավաքածուի մեծ մասը (մոտ 2500 առարկա) ներկայումս գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում, որոշ մասն էլ ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ում: Հուշարձանի պեղումներից մոտ 50 տարի անց, ՀՊԹ աշխատակիցների և մեր կողմից ամբողջ հնագիտական նյութն սկսվել է ևս մեկ անգամ մանրազնին հետազոտվել: Շրջանառության մեջ կդրվեն չհրատարակված նյութեր, որոնք հատկապես վերաբերում են վաղ բրոնզի դարի Կուր-արաքսյան մշակույթին, և որոնք կլրացնեն հնագետների իրականացրած նախկին շնորհակալ գործը:

13 Բաբայան 2002, 3:

14 Բաբայան 2003, 135:

15 Բաբայան 1981, 40:

16 Բաբայան 1997, 92:

17 Բաբայան 1984, 93:

18 Բաբայան 1996, 32–33:

19 Բաբայան 2013, 7–8:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՊԹ-Հայաստանի պատմության թանգարան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ և այլք 2018
Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ., Բադալյան Ռ., Բաբայան Ֆ., Բոբոխյան Ա., «Տելեմակ Խաչատրյան. հայ հնագիտության երախտավորը» // Արագածի թիկունքում. Հնագիտական հետազոտություններ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, «Գիտություն», 2018:

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2003
Ավետիսյան Պ., Ուշ բրոնզի առաջին փուլի հնագիտական համալիրների առանձնացման և ժամանակագրության հարցերի շուրջ // Հայաստանի հնագույն մշակույթը 3, Երևան, «Մուղնի», 2003, 52–60:

ԲԱԲԱՅԱՆ 2013
Բաբայան Ֆ., Արթիկ-Հառիճ պատմահնագիտական համալիրը // Պատմամշակութային ժառանգության պահպանման խնդիրները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2013, 7–8:

ԲԱԲԱՅԱՆ 1992
Բաբայան Ֆ., Հառիճը Անիի մշակույթի ոլորտում // Անի. Գիտական-հասարակական եռամսյա հանդես, 1992, №3–4, «Պարբերական», 97:

ԲԱԲԱՅԱՆ 2003
Բաբայան Ֆ., Հառիճի վանական համալիրը՝ իբրև պատմահնագիտական հուշարձան // Հայաստանի հնագույն մշակույթը 3, Երևան, «Մուղնի», 2003, 135–144:

ԲԱԲԱՅԱՆ 1996
Բաբայան Ֆ., Հառիճի վանքահամալիրում հայտնաբերված ծխամորճի թվագրության հարցի շուրջ // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական երկրորդ գիտաժողով, Գյումրի, «Գիտություն», 1996, 32–33:

ԲԱԲԱՅԱՆ 2002
Բաբայան Ֆ., Հառիճի վանքի տարածքում կատարված պեղումների արդյունքները (1989–1991 թթ.) // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական հինգերորդ գիտաժողով, Գյումրի, «Գիտություն», 2002, 3–5:

ԲԱԲԱՅԱՆ 1981
Բաբայան Ֆ., Միջնադարյան հուշարձանների պեղումները Հառիճում // Հայկական ՍՍՀ-ում 1979–1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 39–40:

ԲԱԲԱՅԱՆ 1984
Բաբայան Ֆ., Միջնադարյան նորահայտ նյութեր Հառիճի պեղումներից // Լրաբեր հասարակական գիտությունների, 1984, №11, 90–98:

ԴԵԻԵՋՅԱՆ 2003
Դևեջյան Ս., Նորահայտ կնիքներ Հառիճից // Հայաստանի հնագույն մշակույթը 3, Երևան, «Մուղնի», 2003, 67–71:

ԽԱՉԱՏՐՅԱՆ 2003
Խաչատրյան Ն., Քարե կոթողներ Հառիճավանքից // Հայաստանի հնագույն մշակույթը 3, Երևան, «Մուղնի», 2003, 118–121:

КУШНАРЕВА 1993
Кушнарева К. Х., Южный Кавказ в IX-II тыс. до н.э, Санкт Петербург, «Петербургское Востоковедение», 1993.

КУШНАРЕВА 1976
Кушнарева К. Х., Рецензия на кн.: Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Изд-во Ереванского гос. университета, Ереван, 1975, 278 стр. // Պատմա-բանասիրական հանդես, 1976, № 2, 243–248.

ХАЧАТРЯН 1979
Хачатрян Т. С., Артикский некрополь. Каталог, Ереван, изд. ЕГУ, 1979.

ХАЧАТРЯН 1975
Хачатрян Т. С., Древняя культура Ширака, Ереван, изд. ЕГУ, 1975.

ХАЧАТРЯН 1974
Хачатрян Т., Из истории изучения древнейших памятников склонов горы Арагац, Арменоведческие исследования, вып. I, Ереван, изд. ЕГУ, 1974, 83–114.

BADALYAN 2014
Badalyan R., New data on the periodization and chronology of the Kura-Araxes culture in Armenia // Paléorient, Pluridisciplinary journal of prehistory and protohistory of South-western and Central Asia, vol. 40.2, Paris, CNRS ÉDITIONS, 2014, 71–92.

Նկ. 1. Հնագետ Տելեմակ Խաչատրյանը Հառիճի պեղումների ժամանակ (Ֆրինա Բաբայանի անձնական արխիվ)

Նկ. 2. Տելեմակ Խաչատրյանը դստեր՝ Նոնե Խաչատրյանի և հնագետ Լյուդվիգ Խաչատրյանի հետ Հառիճի պեղումների ժամանակ (Ֆրինա Բաբայանի անձնական արխիվ)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5